ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N 45-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԵՆԹԱԿԱ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ (ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ) ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՉԱՓԵՐԸ (ՑՈՒՑԻՉՆԵՐԸ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի ԹԻՎ 235-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 178-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 270-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ ՀՀ ՆԳՆ) և ՀՀ ՆԳՆ նախարարությանը ենթակա պետական մարմինների ծառայողներին (աշխատողներին) պարգևատրում տալու կարգը և չափերը (ցուցիչները)՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի 2022 թվականի մարտի 14-ի «Պարգևատրումների կանոնակարգման և Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության 2021 թվականի օգոստոսի 16-ի N 1022-Ա հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 235-Ա հրամանը:

3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

4. Հրամանը ծանոթացնել իրավասու ծառայողներին (աշխատողներին):

Ա.ՍԱՐԳՍՅԱՆ

«30» մայիսի 2025թ.

Ք. Երևան

Հավելված
ՀՀ ՆԳ նախարարի
«30» մայիսի 2025թ. թիվ 45-Լ հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԵՆԹԱԿԱ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ (ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ) ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՉԱՓԵՐԸ (ՑՈՒՑԻՉՆԵՐԸ)

1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ ՀՀ ՆԳՆ) և ՀՀ ՆԳՆ ենթակա պետական մարմինների ծառայողներին (աշխատողներին) պարգևատրման ֆոնդի սահմաններում պարգևատրում տրվում է որակյալ աշխատանքի կամ հատուկ առաջադրանքների կատարման համար:

2. Միանվագ դրամական պարգևատրումը համարվում է խրախուսանք, եթե հրամանում առկա է տվյալ ոլորտը կարգավորող օրենսդրությամբ խրախուսանք կիրառելու հղում:

3. Սահմանել, որ ծառայողներին (աշխատողներին) ամսական պարգևատրում չի տրվում հետևյալ դեպքերում.

1) տույժ ստացած ծառայողին (աշխատողին)՝ տույժ ստանալու ամսվա համար,

2) աշխատանքի նոր ընդունվածներին՝ տվյալ ամսվա համար,

3) արձակուրդում գտնվող ծառայողին (աշխատողին)՝ արձակուրդում գտնվելու ամսվա համար, եթե այն գերազանցում է 15 օրը,

4) ժամանակավոր անաշխատունակության մեջ գտնվող ծառայողին (աշխատողին)՝ ժամանակավոր անաշխատունակության մեջ գտնվելու ամսվա համար, եթե այն գերազանցում է 15 օրը,

5) կադրերի ռեզերվում գրանցված ծառայողներին (աշխատողներին)՝ կադրերի ռեզերվում գրանցված ժամանակահատվածի համար,

6) ծառայողին (աշխատողին) պաշտոնավարման կասեցման դեպքում՝ կասեցման ամբողջ ժամանակահատվածի համար,

7) պարգևատրում տալու վերաբերյալ հրամանի օրվա դրությամբ ծառայությունից (աշխատանքից) արձակված (ազատված) կամ կադրերի

ռեզերվում գրանցված ծառայողներին (աշխատողներին), որոնց պարգևատրման հարցը կարգավորվում է առանձին հրամանով՝ վերջնահաշվարկում այն ներառելու պայմանով՝ ազատված կամ կադրերի ռեզերվում գրանցված ամսվա չաշխատած օրերի համար:

4. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարին (այսուհետ՝ ՀՀ ՆԳ նախարար), ՀՀ ՆԳ նախարարի տեղակալներին, ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղարին, ՀՀ ՆԳՆ ենթակա պետական մարմինների ղեկավարներին և նրանց տեղակալներին պարգևատրում լրիվ կամ մասնակի վճարվում է կամ չի վճարվում Հայաստանի Հանրապետության վարչապետի համաձայնությամբ:

5. ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության ծառայողներին (աշխատողներին) յուրաքանչյուր ամիս պարգևատրում տրվում է հիմնական աշխատավարձի 20 %-ի չափով:

6. ՀՀ ՆԳՆ և ՀՀ ՆԳՆ ենթակա պետական մարմինների (բացառությամբ ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության) քաղաքացիական ծառայողներին և փորձագետներին (մեկ տարի ժամանակահատվածով ներգրավված) յուրաքանչյուր ամիս պարգևատրում տրվում է հիմնական աշխատավարձի 16 %-ի չափով:

7. ՀՀ ՆԳՆ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության ուղեկցող սպայական վաշտի ծառայողների համար սահմանված են ամսական պարգևատրումների հետևյալ չափերը՝

1) սպայական վաշտի հրամանատար՝ 305000 (երեք հարյուր հինգ հազար) դրամ,

2) սպայական վաշտի հրամանատարի տեղակալ՝ 285000 (երկու հարյուր ութսունհինգ հազար) դրամ,

3) դասակի հրամանատար՝ 211000 (երկու հարյուր տասնմեկ հազար) դրամ,

4) ավագ տեսուչ (վարչական գործունեություն իրականացնող)՝ 190000 (հարյուր իննսուն հազար) դրամ,

5) ավագ տեսուչ, տեսուչ՝ 115000 (մեկ հարյուր տասնհինգ հազար) դրամ:

8. Պարգևատրումներ կարող են տրվել նաև աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցների հաշվին:

9. ՀՀ ՆԳՆ ոստիկանության ծառայողներին (աշխատողներին), այդ թվում՝ պաշտոնը ժամանակավոր զբաղեցնողներին, պաշտոնի ներկայացուցչականության, կառավարչական որոշումներ ընդունելու և ենթակա ստորաբաժանումներում օրինականության վիճակի համար անձնական պատասխանատվություն կրելու հանգամանքներով պայմանավորված, սահմանված են պարգևատրումների հետևյալ չափերը՝

1) գլխավոր վարչության պետին՝ 70000 (յոթանասուն հազար) դրամ,

2) գլխավոր վարչության պետի տեղակալին, ինքնուրույն վարչությունների, ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության ենթակա տարածքային վարչությունների պետերին՝ 43000 (քառասուներեք հազար) դրամ,

3) ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության ենթակա (տարածքային) բաժինների պետերին (այդ թվում՝ պարեկային ծառայության գնդի հրամանատարին)՝ 18000 (տասնութ հազար) դրամ:

10. ՀՀ ՆԳՆ և ՀՀ ՆԳՆ ենթակա պետական մարմինների բոլոր ծառայողները (աշխատողները), անկախ զբաղեցրած պաշտոնից, կարող են լրացուցիչ պարգևատրում ստանալ, եթե իրենց գործուն աջակցությամբ կամ մասնակցությամբ կանխվել կամ բացահայտվել են դիտավորությամբ, ոչ ակնհայտ պայմաններում կատարված՝ սույն հրամանով նախատեսված ոչ մեծ, միջին ծանրության, ինչպես նաև ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություններ կամ հայտնաբերվել են դրանց կատարման համար հետախուզվող անձինք, կամ ծառայողի (աշխատողի) կողմից փրկվել է մարդու կյանք, կամ կանխվել է մարդու առողջությանը սպառնացող վտանգը, կամ ծառայողը (աշխատողը) նախագծել, մշակել, ներդրել է ՀՀ ՆԳՆ առաջանցիկ զարգացման, հանցագործությունների կանխարգելման համար նշանակալի ծրագրեր (տեղեկատվական տեխնոլոգիաների, իրավաստեղծ գործընթացի, ֆինանսական, տնտեսական, իրավական քարոզչության և այլ ոլորտներում):

11. Սույն հավելվածի 10-րդ կետով նախատեսված լրացուցիչ պարգևատրումները տրվում են հետևյալ չափերով.

1) առանձնապես ծանր հանցագործության, բնակարանային գողության (բազմադրվագ բնակարանային գողությունները դիտվում են մեկ դեպք) յուրաքանչյուր դեպքի բացահայտման կամ կանխման համար՝ մինչև 500000 (հինգ հարյուր հազար) դրամի չափով,

2) ծանր հանցագործության (բացառությամբ բնակարանային գողությունների), անձնական ունեցվածքի բազմադրվագ գողության, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 1-ին մասով, 436-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և 437-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների բացահայտման կամ կանխման համար՝ մինչև 250000 (երկու հարյուր հիսուն հազար) դրամի չափով, ընդ որում, նույն անձի /անձանց/ կողմից կատարված անձնական ունեցվածքի բազմադրվագ գողության բացահայտման յուրաքանչյուր դրվագի համար վճարվում է 10000 (տասը հազար) դրամի չափով, բայց ոչ ավելի, քան սույն կետով սահմանված առավելագույն չափը,

3) ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների կատարման համար հետախուզվող անձանց հայտնաբերման, ինչպես նաև սույն հավելվածի 10-րդ կետում նշված մյուս յուրաքանչյուր դեպքում՝ մինչև 300000 (երեք հարյուր հազար) դրամի չափով,

4) Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասով, 257-րդ հոդվածի 2-րդ մասով, 258-րդ հոդվածի 1-ին մասով, 264-րդ հոդվածի 1-ին մասով, 297-րդ հոդվածի 2-րդ մասով, 335-րդ հոդվածի 1-ին մասով, 396-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված հանցագործությունների բացահայտման համար մինչև՝ 150000 (մեկ հարյուր հիսուն հազար) դրամի չափով:

12. Հույժ գաղտնի:

13. Սույն հավելվածի 11-րդ և 12-րդ կետերով նախատեսված պարգևատրումները չեն տրվում պարգևատրում տալու վերաբերյալ հրամանի օրվա դրությամբ ծառայությունից (աշխատանքից) արձակված (ազատված) ծառայողներին (աշխատողներին):

14. Սույն հավելվածի 10-րդ կետով նախատեսված հիմքերով լրացուցիչ պարգևատրում տրվում է ՀՀ ՆԳ նախարարի հրամանով՝ նրան ուղղված զեկուցագրի հիման վրա, որը պետք է պարունակի կոնկրետ հիմքը (դեպքը)

նկարագրող, ծառայողների (աշխատողների) գործուն մասնակցությունը (աջակցությունը) հիմնավորող պատճառաբանական մաս, ինչպես նաև նրանցից յուրաքանչյուրի պարգևատրման կոնկրետ չափի վերաբերյալ առաջարկությունը: Եթե պարգևատրման մասին զեկուցագիր ներկայացվում է ՀՀ ՆԳՆ առաջանցիկ զարգացման, հանցագործությունների կանխարգելման ծրագրերի հիմքով, ապա դրանում նշվում են նաև ծրագրի համառոտ նկարագրությունը և առկա նշանակալի արդյունքները:

15. Սույն հավելվածի 14-րդ կետով նախատեսված հրամանը ոստիկանության ծառայողների համար տրվում է ՀՀ ՆԳՆ ոստիկանության պետի – ՀՀ ՆԳ նախարարի տեղակալի հրամանով:

16. Յուրաքանչյուր հաշվետու ամսվա համար մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 10-րդ օրը, իսկ դեկտեմբեր ամսվա համար մինչև տվյալ ամսվա 15-ը պարգևատրման ներկայացվող անձնակազմի ցուցակը հաստատվում է ՀՀ ՆԳՆ և ՀՀ ՆԳՆ ենթակա պետական մարմինների կանոնադրությամբ նախատեսված իրավասու պաշտոնատար անձանց կողմից և ներկայացվում ՀՀ ՆԳՆ ֆինանսաբյուջետային վարչություն՝ վճարումն իրականացնելու համար:

17. Ամսական պարգևատրումները յուրաքանչյուր հաշվետու ամսվա համար տրվում են մինչև հաջորդող ամսվա 15-ը, բացառությամբ դեկտեմբեր ամսվա, որի համար պարգևատրումը տրվում է մինչև դեկտեմբերի 25-ը: